## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԶՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՀԱՅՏՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

20.12.2022 19:00

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը և Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիան իրենց զորակցությունն են հայտնում Արցախի Հանրապետության ժողովրդին, մասնավորապես Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի անդամներին:
Այս դժվար վիճակում շատ կարևոր է ազգային միասնականությունը, այդ թվում՝ մասնագիտական համերաշխությունը:
Փաստաբանների պալատը և Փաստաբանական ակադեմիան չեղարկել են իրենց ամանորյա միջոցառումները և միջոցառումների համար նախատեսված, ինչպես նաև այլ տնտեսած միջոցները փոխանցելու են Արցախի Հանրապետության փաստաբանների պալատին:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })